



ԼՐԱԳԻՐ

ԲԱՆԱԲԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԱԿԱՆ ԵՒ ՏՆՏԵՍԱԿԱՆ

Տարեկան դրոշմ է . . . 120 դր.
Վեցամսեայ . . . 65 "
Նամակայ . . . 35 "
Մէկ ծանուցումը տողին 40 վարա է :
Ստորագրութիւնները կանխիկ են :
Ստորագրութիւնները ամեն ամսոյն 1 ին
եւ 16 ին կը սկսին :

Գործը երթ անկէ լրացնելուն ծախումը
ծախարդ ամեն մէկ թիւին համար 20
վարա է :
Լրացողս վերաբերեալ նամակ կամ որ
եւ ինչ գրութիւն, խմբագրին պիտի
ուղղուի : Եւ ամեն ծախումը ծախ-
ար իր կողմէն վայել է :

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ 21 ԱՊՐԵԼ

ԲԱՆԱԲԱԿԱՆ

Սիւնայէն եկած լուրերը կը ծա-
նուցանեն, թէ Ռուսիոյ գեապաններուն
Բեղրապոլիէն սպասած նոր հրաման-
ները ապրիլ 416ին Սիւնայ հասնել են :
Հետեւեալ օրը կէս օրը ժամ մը ան-
ցած գեապանական ժողովը գումարեր
ժամ ու կէս տւեալ է : Բնականաբար
յոյս չկայ, որ Բեղրապոլիէն եկած աս
նոր հրամանները առջիններէն աւելի խա-
ղաղութեան հաստատութիւնն նպատա-
ւոր լինան : « Հաւանական է, կրնայ Պո-
լիսի լրագրողը, որ Ստամբուլի իշխանը
եւ Պ. Թիմոթի Ռուսիոյ կողմէն նոր
առաջարկութիւններ բերեն, բայց հա-
ւանական չեմք, որ գեապաններ Չին
գաղապարութիւնը ստորագրող տիրու-
թեանց երեսփոխաններէն ընդունվին » :

Կարենիաց թիւերնու մէջ հա-
մառօտ տեղեկութիւն մը տուինք Պաղ-
ղոյ տիրութեան պաշտօնական Միւլիս-
լրագրին մէջ Արեւելի պատերազմին
վրայօք հրատարակած երկար յօդուա-
ծի մը վրայ : Յիշեալ յօդուածը Արե-
ւելի պատերազմին զինուորական եւ
գեապանական գործողութեանց ընդհա-
նուր ու կատարեալ նկարագիրն ըլլալուն
արժան կը համարինք լրագրոյ մէջ
թարգմանութեամբ մերարգոյնթերցող-
ներուն հաղորդել :

ՊԵՏԱԿԱՆ ԱՐԽԻՒՆԸ

Ա.

ՁԻՆՈՒՈՐԱԿԱՆ ՄԱՍՆ

Պաղղոյ պէս մեծ ազդի մը անհայտա-
կելի իրաւունքն է իմանալ ծննդատեղիները, երբ
որ տիրութեան պատուոյն ապահովութեանը ու
զօրութեանը կը վերաբերի :

Սոյսեր կառավարութեանը պէս հոգի կա-
ռավարութեան մ'ալ նախկին պարագն է ճշ-
մարտութիւնը բոլոր հասարակայն օգուտը
մտածելու հարկնաւորութիւնը չարտասարբեր
լուսկենայութիւնը : Արեւելի պատերազմին անոր պատ-
ճառները, նպատակը, զանազան յառաջ տանելու
համար պարտաւորութեան զինուորական գործողու-
թիւնները, առաջին առեւելու կամ շուտով լը-
մնայնելու համար եղած գեապանականութիւն-
ները ասորումն օրս քննութեան ու վիճարկու-
թեան նիւթեր են, ետքը պատմութեան նիւթ
պիտի ըլլան : Արդ՝ աս իրողութիւնները օգտա-
կար կերպով քննարկելու եւ արդարապէս դատ-
վելու համար, ամենախառաքեալ ճշգրտութեամբ
հոս կը ծանուցանենք : Աս բանը միանգամայն օ-
րինաւոր եւ օգտակար կ'երեւայ մեզի : Հասարա-
կայ կարծիքը ամեն օր այժմեան եղելութիւնն
ունենալով իր խոսքով շուտով կ'ընտել-
վի եւ գիտաւ կ'ընտելի : Օտարական ապահովութեան
լու ամենին լաւ միջոցը՝ եղած բաներուն տեղե-
կացնելն է :

Արեւելեան պատերազմը ինչպէս մտածվե-
ցաւ սկիզբէն, ինչ նախատեսութեամբ եւ ինչ
խորհուրդներով անոր յառաջագիծը չեմք գիտ-
ելու : Ինչ պատճառներով ետքը ան յառաջագիծը
փոխվեցաւ, ինչպէս համար անդիմադրելի ու զաղ-
կացեց զօրքերը Վարդը գոյնի եկան փոխանակ

Պաշտօնի վրայ եւ Պաշտարարի մէջ պատ-
րագրութեան : Ինչպէս մեկնելու է Սեփարդի
երկար գիմնաւոր պաշտարող զօրաց եռանդին եւ
գիւցաղական քաղութեանը առեւել : Ահա աս
կէտերն են որ կ'ուզենք քննել աս յօդուածին
առաջին մասին մէջ : Աս քննութեան մէջ սոյն
իրողութիւններ, վաւերական գրութիւններ, զե-
նուորական գիտութեան ու պատմութեան վրայ
հիմնեալ ծննդատեղիները միայն յառաջ պի-
տի բերենք :

Սեփարդ յայտնի են ան ծանրակշիռ ու բա-
տկալող պարագաները որոնք Վաղարշի պարտա-
ւորեցին թուրք քաղաքը քառասուն տարուան խա-
ղաղութեան մը ետեւ : Ռուսիա՝ հաճախանի
վրայ բանեցնելու ուղիւ նախկինում թիւնը պաշ-
տօնական ծննդատեղիներու երկիւղել չկրնար
ընդունել ալ, բաւական զօրութեամբ ընդունել
տալու ձեռք զարկեր էր : Ռուսի գաղապար-
ութիւնները պատուէր, օսմանեան հոգի մտեր, եւ
Արեւելեան բանի տեղ չգնելով՝ անոր ալ սպառ-
նացներ էր : Իր բանակները Պաշտարարին իշխա-
նութիւնները գրաւէր, Պաշտարար անցեր, եւ
արդէն յաղթական ընթացքով մը Վաղարշներն
անցնելու կէտերը կը նշանակէր : Տաճկաց ազգին
զմայելելու ետեւէն ու ճիգը աս յառաջագիծն աւ-
ելելու բաւական չէր կրնար ըլլալ : Իրաւունքն
Ռուսիա օսմանեան աղբի ինչպէս ու տիրացած
կարծելով, անակնկալ արգելք մը դառաւ իր
առջեւ անոր արեւելեան անձնատիրութիւնը,
եւ օսմանց ալ աս դիմադրութիւնը միշտ
կուտար իրենց որ ժամանակաւ Սեփարդի
ընտիր յաղթէր էին : Բայց զօրութիւնները հա-
ւատար չըլլալով, բոլոր աշխարհ շուրջ կորած
ու խռոված անհանգստութեամբ գործին վախ-
ճանքին կ'ապուէր : Վերամանակն տիրութիւնն
ընդունաւ Սեփարդի իշխանութեան* հաստատած քա-
ղաքականութեան սկզբունքները պահպանելու եւ
միւս կողմէն իրենց պատուոյն պահպանելու բ-
նեւելու խորհուրդներուն մէջ տեղը անսոյս օտա-
ւանելով, տակաւին չէին գիտեր թէ երկար ա-
տենէ ի վեր իրենց վրայ ծանրեցած գոռող
իշխանութեան լուծին մինչեւ ետքը համբերելու
էին, թէ վերջական գիտելիա թօթափելու էին :
Վիմադրութեան առաջին նշանը Արեւմուտքէն
տեսնուցեալ, Վաղարշի ու Սեփարդի անկողնու-
թեամբ միանալով, առանց վարանելու իրենց նա-
ւատարմին ու զօրքերը Արեւելք խրկելին՝ Օտ-
մանեան տիրութեան ամբողջութիւնը, դաշնա-
ղութեանց յարգը, եւ արդարեւ հաւատարմը
առեւել թիւնն ու քաղաքակրթութիւնը պաշտպա-
նելու :

Մեր երկրին (Վաղարշի) կառավարութեա-
նը զլուս եղող բարձր կամքը՝ որ աս պատերազ-
մը իր պատուոյն համար հարկ մը ծանցած էր,
պատուաւոր իրաւաւորութեամբ մը անոր ա-
ռաջին առեւելու բնօրէնայն փորձեր ընելին եւ
տեւ : Վաղարշի թուրք մեծամտուն մարաթական
ձեռքը յանձնելու ժամանակը պատուէրները գրեց
տուաւ անոր : Այս պատուէրներուն մէջ, որ 1853
ապրիլ 12ին գրված են, հետեւեալ խօսքերը
կային :

« Մարաշիս, ձեզ դաղղական բանակի
մը զլուս գնելով, որ մայր հայրենիքէն վեց հա-
րիւր ժամու ծամբայ հեռու պատերազմելու պի-
տի երթայ, իմ առաջին պատուէրն է ամենամեծ
խնամք մը ունենալ զօրաց առողջութեանը վրայ,
համար եղածին չափ զանազան խնայել, եւ մինչեւ
որ յաջողութեան հասնանքս թեանք գտնել եւ
բեր մասին երկուքը մեր կողմէն ըլլալուն ապա-
հով չըլլանք՝ պատերազմ չընել : »

« Արեւելու թերակողմէն՝ ցամաք ելելու
* Սեփարդի գաղապարութեան կ'ըսեն 1813ին Մեծին
Նարդիւնի անկումէն ետեւ Եւրոպական հինգ մեծ տե-
րութեանց ըրած գաղապարութիւնը :

զլուստը տեղ ընտրված է, որովհետեւ մեր
պատերազմական գործողութիւններուն խորիւ-
նը պիտի ըլլայ իրեն զինուորական յարմար գիւղ-
մը, այսինքն մեր զինուորական համարանոցը
պիտի ըլլայ՝ պահեստին, հիւանդանոցին,
պաշարին հոս գնելու եւ անկէջ գիւրութեամբ
յառաջ քալելու կամ նորէն նաւ նստելու համար :
Ասիկա արգելք մը չըլլար ձեռք թէն հոս եր-
թաշուրդ եւքը յարմար դատիք՝ հոս դաշնակա-
ն զօրքերէն մէկ կամ երկու բաժին Ս. Պօլսոյ ա-
րեւմտեան կողմը կամ Իսպիւտար նստեցնելու :

« Վանի որ թշնամիին դիմացը չէր, ձեռ
զօրութեան ցրուած կենալը յիստ մը չունի, եւ
զօրքերնուդ Ս. Պօլսոյ գաղապարը քաղաքական
աղբեղնութիւն մը կրնայ ունենալ : Բայց թէն
գիտաւ ձեռք չէր պաշտպանել յառաջ քա-
լելու ետեւ՝ եւ քաղաքը ստիպվեց, աւելի
օգտակար կ'ըլլայ Արեւելու դաշնակալ քան թէ
Ս. Պօլսոյ, որովհետեւ ռուսները երբեք չեն հա-
մարձակիր Արեւելու պաշտպան Ս. Պօլսոյ քաղ-
իւնայ ալ կողմը 60,000 անգղիացի ու գաղղիացի
ընտիր զօրքերու բանակ մը թողնելով : Այսու ա-
մենայն, թէն Ս. Պօլսոյ մօտ Վարապուտե-
նի գիւղը ամրացնելու ուղիւ, անոր պաշտպանու-
թիւնը միանալ Տաճկաց յանձնելու դիմադրու-
թեամբ ամրացնելու է : Ինչպէս որ, նորէն կրնեմ,
մեր գիւղը աւելի անկախ եւ աւելի ահաւոր կ'ը-
լայ՝ ռուսաց բանակին ալ կողմէ վրայ դաշնակա-
լով, քան թէ Ս. Պօլսոյ թերակողմէն մէջ պա-
շարվելով :

« Այս առաջին կէտը հաստատվելէն եւ
անդիմադրելու ու գաղղիացեց բանակը Մարա-
շիսի եղբոր գումարակէն ետեւ, պէտք է Իս-
մէր փաշային ու լորտ Ռաիսիին հետ խորհր-
դակցելով հետեւեալ՝ երբ յառաջագիծներուն
մէկը ընտրէր :

« 1. Կամ Վաղարշներուն վրայ ռուսաց դեմ
քալել :

« 2. Կամ Վարդի տիրել :

« 3. Կամ զօրք հանել Օտեմա եւ կամ Սե-
փարդ երբեք Ռուսիոյ ունեցած ուրիշ որ եւ է
մէկ երկրէր :

« Առաջին դեպքին մէջ, Ս. Պօլսոյ ամենին
յարմար ու կարեւոր կէտը կ'երեւայ ինծի բոլ-
ունք : Հետեւեալ զօրքերը կրնան ծովէն հոս փա-
խաղարկել, եւ ձիւարները թերեւս աւելի դի-
մադրութեամբ ցամաքէն : Բնաւ երբեք մեր զօրքերը
Սեփարդի շատ հեռանալու չեն, սրբաւ զի ա-
ղաւաղար զարգացում թիւնն ունենան միշտ նա-
ւատարմից հետ :

« Երկրորդ դեպքին այսինքն Վարդը առ-
նելու դեպքին մէջ, ամեն բան առաջ ցամաք ել-
լու տեղին վրայ ապահով ըլլալու է : Երբեք զի
թշնամիին հետ ըլլայ, եւ քիչ ժամանակի մէջ
այն տեղը ամրացնելու է, որպէս զի եւ քաղ-
իւնայ ըլլայ ինչ իմանալու զօրքերու տեղ մը ըլ-
լայ : Արեւելու օրին ամենին փորձ փորձելու չէ,
առանց գտնել կէս խոսքը պաշարման թիւնն ու
եւ քաղաքին հոգի պարկեր ունենալու : Երբ որ
Արեւելու օրին մտնելու ըլլայ, առաջ պէտք
է Վաղարշի կողմը չորս ժամ հեռաւորութեամբ
փոքրիկ նաւահանգիստ մըն է, որուն միջոցաւ
կրնայ պաշարման ժամանակը գիւրութեամբ հա-
ղորդակցել նաւատորմին հետ :

« Երբ որ դեպքին, այսինքն ծովապետե-
րուն հետ խորհրդակցութեամբ Օտեմայի դեմ
գործողութեան մը ձեռք զարկելու դեպքին մէջ,

« Արեւելու ամեն պարագայի մէջ՝ իմ
զլուստը պատուէրն աս է ձեռք, որ բանակը բը-
նաւ երբեք մասն մասն չբաժնէր, այլ միշտ բոլոր
զօրքերնիւ մէկ տեղ գումարած յառաջ քալէր :
որովհետեւ քառասուն հազար ամբողջ եւ աղէկ

հրամայած զօրաց բանակ մը ահաւոր զօրութիւն
մըն է միշտ : Ընդհանրապէս՝ երբ որ ցրուած ու
բաժնուած ըլլայ՝ ոչինչ բան մըն է :

« Թէն որ պարկը գիւրութեան համար՝
զօրքերը բաժնելու պարտաւորվեց, այն կերպով
բաժնեցէր, որ քանակութեամբ մէջ օրոշեալ
տեղ մը գումարելու կարող ըլլար :

« Թէն որ ծամբայ քաղաք ամենին ըրանի
մը մասն բաժնուած ըլլար, իրար գտնալու ու
գումարելու տեղ մը առաջուց նշանակեցէր թը-
նամիին գտնուած տեղէն բաւական հեռու, որ-
պէս զի զատ զատ ամեն մէկ մասին վրայ չար-
ձակի :

« Թէն որ Ռուսները եւ քաղաք ըլլար, Պա-
շտարար անդին մ'երթար, մինչեւ որ Ռուսներն
ալ Ռուսիոյ դեմ պատերազմի ելած չըլլայ :

« Բնականաբար ձեռ ամեն շարժումները
անդիմադրելու ուղիւ պատերազմին հետ խորհրդակցու-
թեամբ պիտի ըլլան : Վանի մը բայցադի պա-
րագաներ միայն կան, ուր բանակին աղաւա-
թեամբ համար կրնան ամեն օրուս միւս օտա-
նել :

« Մարաշիս, փառ հաճութեան կատարեալ
է քու վրայ, անտարակոյս եւ՝ որ աս պատուէր-
ներս հաւատարմութեամբ կը կատարես, եւ մեր
արժուեղան գործներուն փառքը կ'աւելցնես » :

Սոյսեր մարաթական Սեփարդ-Սեփարդի տուած
պատուէրներուն աս քաղաքներէն մէջ ահա կը
տեսնուի, որ անդիմադրելու ու գաղղիացեց զօր-
քերուն ցամաք ելելու տեղ ընտրված էր Արե-
ւելու : Աս ընտրութիւնը ինչ խորին ու ծան-
րակշիռ նկատումներով եղած ըլլալու պէտք է ա-
ղէկ մը հասկնալ :

Սոյսեր պատերազմի մը առաջին կանոնն
է՝ այնպիսի գումարակէն կէտ մը ընտրել, որ թը-
նամիին փառն ապահով, պաշտպանելու գիւրին
եւ զօրաց ցամաք ելելուն ու պաշար բերելուն
յարմար ըլլայ : Նաեւ բանակը կարող ըլլայ անկէջ
յառաջ քալելու, եւ պէտք ըլլայ նե նորէն հոս
քաղաքը, եւ ձիւարները հանդիպած ժա-
մանակը նաւատորմին թիւնն օգնութիւն եւ ապա-
ւելն գտնելու :

Արեւելու թերակողմէն խիտ դերազանց
կերպով կը լինէր ծովային յաջող պատերազ-
մի մը բոլոր պայմանները : Վարդիսի (Չամա-
ղապէի) նեղուցին բերանը ըլլալով, Մարաթայի
ու թերակողմի ծովէն գիւրութեամբ պաշար կը
գտնէր : Ռուսաց եւ օտարաց բանակներուն կա-
ցութեանը նպայքով՝ զլուստը պատճառ մը կար
աս կէտը բռնելու : Ռուսները կրնային Վանու-
էն Ռուսուր անցնելով, Արեւելու պաշար վը-
րայ քալելով, եւ իրենց ձախ կողմը թողնելով
առաջ անոր բերքերը եւ մինչեւ անգամ Ս.
Պօլսոյ, մեզից առաջ երթալ Արեւելու բոլ-
նել, եւ մեր Սեփարդի մօտ ծամած նաւատորմին
եւ գաղապար ծամբայ գոյնել : Ասիկա մեծ վը-
տանգ մըն էր, որ դաշնակցի կառավարութիւնն
ըր յառաջատեսութեամբ հասկնային եւ առաջին
տեղն :

Ռեքիշ նկատումներ մըն ալ կը պարտաւորէր
Արեւելուն առաջինը բռնելու : Վաղարշի զօ-
րաց ծամբայ ելած ամեն ուղիւն 1854 ապրի-
լին՝ ամեն մարդ անհանգստութեամբ մէկմեկ
կը հարցնէին, թէ մեր զօրքերը ժամանակին
պիտի կրնային հասնիլ Ս. Պօլսոյ պաշտպանե-
լու : Աս ժամանակը աւելի հաւանական կ'երեւար
պաշտպանական պատերազմ մը ընել քան թէ
յարձակողական : Բոլորում օսմանեան տեղու-
թեան ամբողջութեամբ փառն մտնելու մէջ էր, եւ մէկ
կտորն ալ արդէն գացած էր, որն որ կ'երթայինք
պաշտպանելու ու նորէն ձեռք բերելու :

Թէն որ ամենին ըրանի մը պատերազմ մը
կորսնցնէին, ռուսները երբեք առաւ
մէջ՝ Վաղարշներուն վրայ կը համեմէն, եւ Ս.

Պօլսոյ ճամբան առջեւն կը բացվէր։ Այնպէս լուսն դաշնակից զօրքերէն բռնովեւով մայրաքաղաքը ապահով կը մնար։ Վաշնակից կառավարութիւններն հատկապէս, որ ուստաց զօրքերը թէ եւ Անգլիանուարի մասնային, չէին կրնար Վ. Պօլսոյ վրայ քայլել իրենց աջ կողմն վրայ 60 հազար անգղիացի ու գաղղիացի թորելով։ Եւ աս նախատեսութիւնն է որ կը տեսնուի կայսեր տրուած պատուէրներուն մէջ։

Բոլէ է որ, ամեն նկատմամբ, եւ ամեն հաւանական դէպքերու առաջին տեսելու համար՝ Ալեքսանդր թերակողմն խիստ աղէկ ընտրութեան էր իրեն յամար ելելու կէտ եւ գործողութեան խորին։ Եւ կէտէն տաճկաց տեղութեան մայրաքաղաքը կը պաշտպանէինք, մեր նաւատորմիչներուն շարժմանցը տէր կը մնայինք, առանց եւ տեսնին բաց ձգելու յառաջ կը քայլէինք, եւ թուրքին ու Պարսկիկայի հետ հաղորդակցութիւնն կը պահէինք։

Բայց հազեւ Անգղիոյ ու Վաղղիոյ զօրքերը Ալեքսանդր հասեր էին, տեսարանը արդէն փոխված էր։ Թէպէտ ուստաց յառաջնութեան ընտանները մինչեւ Ա. առնայի մտերմ հասեր էին, այստեղ ամենայնիւ Ալեքսանդրի դիւցազնական պաշտպանութիւնը՝ Սիւրբաբի իշխանին յառաջ քայլելու ետեւը արդիւն էր։ Պատերազմի փոխանակ օսմանեան տեղութեան կեդրոնը հասնելու, Վանսուրի վրայ կ'երկարէր զանազան յաջողութեան մասին։ Վաշնակից զօրաց հրամանատար զօրապետները կարծեցին անտեսել որ ժամանակն պիտի ունենային պատերազմին տեղը հասնելու, թերեւս Սիւրբաբի արտաքին, եւ ան պատճառ օսմանեան բանակին հետ միասնաբար Վաշնակիցը ուստաց դէմ պաշտպանելու իրենց երկու թիւերը Շուսուի ու Ա. առնայի ամբողջ թիւներէն պատարարեալ ունենալով։ Եւ յատկապէս համարձակ եւ միասնական խոհեմ էր. մնաց որ պարագաները եւ փառքին մօտութիւնը ասանկ ընել կը խրատէին։ Թէպէտ իրաւ յունէ ուստերը Սիւրբաբին առնէին, որուն ան կուրբ իրեն անհրաժեշտ ծանուցված էր։ Եւ մեր փաշային նամակներուն մէջ, օսմանեան տեղութեան բազմը մէկ մեծ պատերազմ մը կրնար կախում ունենայ։ Վաղղիոյ ու Անգղիոյ զօրքերը պէտք էր ասիկա հասկնային ու պատրաստութիւն. հան էր իրենց տեղը. որովհետեւ հան էր թերեւս պատերազմին ելքը եւ բազմին վերջին վճիռը։

Գէպէրն աս նախատեսութիւնները չարգարացուցին։ Օսմանեան զօրաց քաջութիւնը եւ դաշնակից զօրաց մօտութիւնը բաւական եւ զան ուստերն ստիպելու որ Սիւրբաբի պաշարումը վերջնեն ու Վանսուրի միւս կողմը քաշվին։

Մանգեալը հետեւեալ ընտով։

ԳԵՐԵՍԵՆ ԵԿԱԾ ԼՈՒՐԵՐ

Ալեքսանդր թորել բանակէն եկած լուրերը մինչեւ ամսոյ 16ը կը հասնին։

9ին ու 10ին կրակը երկու կողմէն դարարեր է. 10ին զիշերը նորէն սկսեր է, բայց թուր կերպով. անանկ որ ամեն մէկ թիւանութ օրը 20 ուստի կ'արձակին, որոնց թիւանութ մի առ մի կը պատասխանէ։

Ամսոյ 10ին բարձրապատիւ Իօմէր փաշան Վաղղիայի դաշտին մէջ Օսմանեան զօրքերը աչքէ անցնելու տեսն, արտոնքը ձիաւոր մը եկեր Իօմէր փաշային նամակ մը տուեր է. ասոր վրայ սպարապետը հրաման ըրեր է զօրքերուն որ տեղերնին դառնան. եւ անմիջապէս ճամբու պատրաստութիւն սկսեր են։ Նոյն զիշերը 10 հազար զօրք շողեւանները նստեր, ու առաւօտուն բարձրապատիւ Իօմէր փաշան այն զօրքերով Անգղիոյ վրայ էր։ Այսով թէ ուստերը մեծ զօրութեամբ Անգղիոյ վրայ քայլելու կը պատրաստվին եղեր։

Նոյն զիշերը ուստերը քանի մը անգամ Ալեքսանդրէն դուրս յարձակեր են՝ կործնողցած զիրքերնին եւ առնելու զխառնութեամբ, բայց ամեն ժամանակի պէս աս անգամ ալ բան մը չեն կրցեր ընել, ու ետ քաշվեր են բազմութիւ մեռեալ թորելով։

Վաշնակից զօրքերը ամսոյ 11ին երկու նոր ականներ ալ բռնկուցեր են

են Վալմի գոթիկն մօտ. առաջինը շատ փնաս տուեր է ուստաց. երկրորդն ալ յաջողեր է, բայց դաշնակից զօրքերէն ալ հարիւրապետ մը եւ քանի մը զինուոր մեռեր ու վերաւորվեր են։

Վաղղիացի թիւանութներէն մէկն ալ նոյն միջոցին ինքնիրեն բռնկելով չորս թիւանութաձիգ զօրք զարնվեր են։

Վաղղիացիք երկու նոր մարտից հաստատուել են միջին գոթիկն զինացը 120 մեթրօ հեռու։ Ուստերը Ալեքսանդր թորել պարսպին վրած տեղին ետեւը հոգէ մարտից մը շինել են։

Անգղիացիք իրենց մարտկոցները 200 մեթրօ յառաջ տարեր են եւ հետ զհետէ նորեր կը հաստատուն։

Վաշնակից զօրքերը բազմաթիւ դաւաններ տուեր են ուստաց ձեռքին։ Անոնք ալ նոր դարաններ կը շինեն։

Ամսոյ 15էն 16 լուսնաբլու զիշերը թիւանութի ու հրացանի կրակը երկու կողմէն սատակացեր է։

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Վաղղիական հրամանաւ։

Իմին Սուլեյմա էֆէնային Արդաբութեան բարձրագոյն տեսնին անդամ անուանեցաւ։ Եւ առթիւ առաջին կարգի պաշտօնատարութեան առաջին աստիճանը տրվեցաւ իրեն։

Տեսչութեան ժողովին անդամ Բէֆիք պէյը Ալփալը տեղակալ անուանեցաւ։

Տեղեանց վանմանը Կարապետ պէյին երկրորդ կարգի եւ մեծագոյն Միհրան եւ Պօղոս չէլչիպներուն եւրոպ կարգի Մէֆթէ պատուանշան տրվեցաւ։

Եզիպտոսի կուսակալութեան սեղանաւոր մեծագոյն Երամեան Գէորգ ամիրային չորրորդ կարգի եւ եղբորը Կարապետ աղային հինգերորդ կարգի Մէֆթէ պատուանշան տրվեցաւ։

Ալփաճանալ Սանօլքի Պալթաճի սեղանաւորին երկու որդեւոր Պ. Սիւրիտոնին եւ Արիպիտին չորրորդ կարգի Մէֆթէ պատուանշան տրվեցաւ։ Նոյն ընտանիքէն Պ. Սալթուրմիշին ալ հինգերորդ կարգի Մէֆթէ պատուանշան տրվեցաւ։

Առնային ապրիլ 14/26 թուով զրված նամակները լուր կուտան, թէ Գլորմէն Ա. առնայի ծովուն տակէն շինված երկաթական հեռագիրը լմացի բանեւոր սկսեր է։ Առնային ալ հեռագրական թիւը արդէն մինչեւ Ռուսիոյ հասած ըլլալով, անցեալ երեքշաբթի Ալեքսանդր թորել բանակէն Ռուսիոյ հինգ ըրակի մէջ լուր առնվիւր է։

Ռուսիոյ զօրքը Դանուբի միւս կողմը Շուրճովա (Նեքից) կը տարվի որ ժամ ու կէս կը քշէ, Շուրճովային ալ դարձեալ երեքշաբթի հեռագիրը Պոլսէն վրայէն Ալեքսանդր կը հասնի։ Վանի մը օրէն Դանուբի տակէն անցնելը երեքշաբթի պարանին զրվիւր կը լմնայ։ Ան ժամանակը Ալեքսան, Փարիզ եւ Լոնդոն մայրաքաղաքները ուղղակի կը յորդութիւն կ'ունենան Գլորմի հետ, եւ մէկ ժամու մէջ Լոնդոնէն Գլորմի եւ Գլորմէն Լոնդոն լուր կ'առնվի կը տրվի, ուր հիմա ուղղակի կ'որդութիւն չըլլալով, Գլորմէն Փարիզ ու Լոնդոն արված լուրերը չորս ժամէն կը հասնին։

ԱՐՏԱԿԻՆ ԼՈՒՐԵՐ

ԱՆԳԳԼԻԱ։ Ամսոյ 4/16ին դաղղիացի Վ. Վալմի ու կայսրուհին Վաղղիոյ ծովեզերեայ Վալէ քաղաքէն նաւ նստելով Անգղիոյ Տուրք քաղաքը ելան։ Ալեքսանդր թորել որ առջե օրէն ի վեր հոն կ'ապասեր, յամարը ելած ժամանակին զանոնք զինուորացի եւ հետերնին մինչեւ Ռուսիոյ թաղաւորական պալատը ընկերացաւ։

Վ. Վ. լքեթրիս թաղուհին պատուոյ անդուղքին տակը Վ. հիւրերուն սպասելով, զանոնք տեսած ատենը՝ ձեռքը երկնցուց Նաբօլէն կայսեր եւ կայսրուհին, եւ անոնց այցելութենէն ու նեցած զոհութիւնը յայտնեց։

Վալմի, կայսրուհին եւ Ալեքսանդր թորել բաց կառքով Լոնդոնի մէջէն անցած ժամանակին, անթիւ բազմութիւն ճամբուն վրայ զիջված ուրախութեան աղաղակներով կ'որջունէին Նոյն վեհապետութիւնը։

Նոյն զիշերը բոլոր Ռուսիոյ պալատը լուսաւորվեցաւ։

Անգղիոյ երկու խորհրդարանները ամսոյ 4/16ին բացվեցան։ Լոնդոնի լըսին, թէ կառավարութեան պաշտօնեաները զինուորական բարեկարգութեան վերաբերեալ առաջարկութիւններ պիտի ընեն խորհրդարաններուն։

Առաւարտութիւնը պատրաստութիւն յառաջ տանելու համար 16 միլիոն լըս սթէլինի փոխառութիւն մը պիտի ընէ։

ԳԵՐԳԼԻԱ։ Փարիզէն լուր կուտան, թէ կառավարութիւնը հրաման իրկեր է Արեւելք, որ 25 հազար ձիաւոր տեղիւր եւ կաղմած պատրաստվի Ա. առնայ եւ շրջականը։ Այսպիսի ձիաւոր մութեան կը հետեւցնեն, թէ 200 հազար գաղղիացի զօրաց բանակ մը պիտի պատրաստվի Բուլղարիոյ մէջ, եւ աս զօրքերը քիչ ժամանակէն Վ. Պօլսոյ դալու պիտի սկսին։

Մարսիլային հեռագրով լուր առած կը ծանուցանեն, թէ ծովային զօրծոց եւ գաղթականութեանց պաշտօնեայ Պ. Տիւրս մեռեր է։

ԱՄՍԵՐԻԱ։ Ալեքսանդր լուր ապրիլ 12թուականով լուր կուտան, թէ բարձրապատիւ Ալեքսանդր թորել փաշան առջե օրը Վ. Պարսիկոս Յովսէփ կայսեր ներկայանալով, հետ տեսութիւն ըրեր է։

ԻՏԱԼԻԱ։ Հոռմէն կը զրկեն, թէ լուր ապրիլ 13ին Պաղք քաղաքէն դուրս Ս. Արքիսի վանքը բազմաթիւ հրախրեալներու հետ կերակրոյ նստելն ետքը, երբ Հաւատոյ տարածման դպրոցին աշակերտները ոտքը պազնելու կը մերձենային, յանկարծ արահը փլելով՝ ամենքն ալ վարի դեմնայարկը ինկան։ Պաղք անմիջապէս արտաքին։ Անթոնիլի եւ Բաթրիի կարգիները, Սոնէալ զօրապետը եւ Հաւատոյ տարածման դպրոցին աշակերտներէն մէկ քանին թեւ թեւ կերպով վերաւորվեցան։

ՌՈՒՄԵԼԻԱ։ Բեզապուրիէն ապրիլ 3 թուականով գաղղիական Բաթրի լուր զին զրված նամակ մը հետեւեալ լուրերը կը քաղենք։

Մայրաքաղաք ամենախորին հանդարտութեան մը մէջ է. մարդ չկար

ծեր որ թշնամութիւններն ամեն կողմէն միանգամայն սկսելու վրայ են, թէ որ չտեսնայ անդադար անցնող թիւանութները, կամուրջ նետելու գործիքները, եւ այլն։ Օրաց գունդերը կուգան, նոյն օրը աչքէ կ'անցըվին, կ'օրհնվին ու հետեւեալ օրը իրենց ցոյց արված տեղերը կ'երթան։

Ալեքսանդր թորել ծանուցի ձեղե պէն անպուր ջանքը որ կառավարութիւնը կրնէ Գլորմեան ծոցին բոլոր տկար կողմերն ու Նեքիս գետին բերանը զոցելու եւ պաշտպանելու համար. բայց մոռցայ ըսելու որ Վրոնշթատի քաղաքն ալ փուրց ու գետին հետ հաւասար ըլլաւ։ Եւ քաղաքին մէջ որ 30 հազար բնակիչ ունէր, հիմա միայն տեղութեան վերաբերեալ շինքերը՝ այսինքն եկեղեցիները, զօրանոցները, հիւանդանոցները, ձուլարանները, բանտերը եւ այլն մնացած են. տունները բոլոր քանդեցան։ Բնադարձակ բանակատեղի մը եղած է հիմա աս քաղաքը, ուր 40 հազար զօրք պիտի բանակին՝ Նեքիսի աս բանակին պաշտպանելու համար։ Պատահաբար բանակ մը հաստատվեցաւ գետին ձախ եղբրը Օրանիէնպոմի մէջ։

Ամեն տեղ բոլոր զանրված մարդիկը եւ զեղացիները օրինաց անուշով բռնվեցան եւ բոլոր ձմեռ պատենշ շինելու աշխատեցան։ Պալմիլի եղբրը եղած բոլոր ուստի երկիրները թիւանութ զիջված է. տեղ մը չկայ որ ամրացած չըլլայ։

Յայտնի կը տեսնվի, որ Նիկողայոս կայսրը երկար ատենէ ի վեր պատրաստվիւ էր աս պատերազմին. ինչու որ տեղութեան զինարանները, ուսկից երկու տարիէ ի վեր շարունակ պատերազմական պաշար կ'ըլլէ, դեռ պարսկական լեւ շատ հեռու են։ Նիւթապէս անհրաժեշտ է, որ երկրին ձուլարանները (տէօքմէխանէ) բաւեն աս զարհուրելի պատրաստութիւններուն, որոնց օրինակը տեսնված չէ ուստաց պատմութեան մէջ։ Արքիլ չէ առջե օրը բերդէն անցած ժամանակ թիւանութներ տեսայ մինչեւ կէսը ձիւնին մէջ թաղված, որ հանվելու եւ տեղ զրվելու կ'ապասեն. վրանին անուանի Շվէտ ձուլարանի մը նշանադրով (մարքա) տեսայ, որն որ կարծեմ Վարանտորֆ սեպուհին է։ Եւ մարդը թիւանութ մը հնարած է որ ետեւէն կը լեցվի։ Ուրախ մէջ Նաթա-Ռուսի ձուլարանը կրնէն այնչափ ձերմակ զնք, թուր, սուլն, տեղ եւ այլն կայ, որ քանի մը միլիոն մարդ զինելու կը բաւէ։

Ռեֆլեկտուս հանգիստը՝ որ առաջ այնպիսի տկար պատերով ամրացած էր որ ձեր Ֆրեդաթններէն մէկը կրնար զանոնք խորտակել ու լեցնել, հիմա ամուր հորապատենշներով ու հեռու գոցող թիւանութներով ամրացած է։ Բոլոր ձերմեռ անոր ամրութեանը աշխատվեցաւ. նոյնպէս Բերնոյի, Բիկայի եւ այլն նաւահանգիստներուն։ Սիւրճ Բուրլան տիպի հին մայրաքաղաքը՝ ծովէն հեռու ըլլալուն դուրսէն վախ չունի կը թուէր, հիմա պարսկաները շինվիւ ըսկընան։ Ռուսիոյ աս մասին բոլոր բերդերը նոր ամրութիւններով պատեցան։ Յառաջիկայ մայիսի մէկէն բոլոր սպիւրը տեղութեան համար բռնված են. դեղացիները պատրաստ պիտի կենան՝ նշան տրված պէս զօրք փոխադրելու այն տեղերը՝ ուր դաշնակից նաւատորմիչները զօրք հանելու փորձ փորձին։ Պալ

Թիկի զաւառներուն մէջ տասնի վեց հաւար սայլ կը համարվի որ կրնան մէկ տեղէն մէկալը 60 հազար զօրք փոխադրել: Բեղարպուրի մէջ եւ շրջակաները հոգաւորներուն հրաման եղաւ որ իրենց սայլերն ու ձիերը պատրաստ բռնեն պէտք եղած տեղերը զօրք փոխադրելու համար:

«Ուսումիոյ ոտքի վրայ ունեցած զօրքերուն ճիշդ թիւը ստուգելի, առջի կարծածիս չափ մեծ չէ: 785 հազար ընտիր զօրք կրնայ պատերազմի հանել Ուսումի: Ըստնոյ 140 հազարը Սոփիա սի ու Ս. Բաստանի մէջ են՝ բայց ի սահմանադրութեանը պահանջող խաղաղութեան խտրութիւնէն: 250 հազարը Գլորի մի Վանուրի վրայ են: Նոյնչափ ալ 15 հաստանի մէջ կայ: 145 հազար ալ Պալմիրի ծովափերը պաշտպանելու սահմանված են, ուր արդէն 40 հազար ծովային զօրք կայ:

«Աստուծոյ բարեգործութենէն զատ տակաւին 256 հազար զօրք ալ կայ, որոնց գործածութիւնը դեռ որոշված չէ, եւ ուր որ պէտք ըլլայ հոն պիտի խորհրդվին:

«Վանուրի բանակը անցեալ ամառ ուսն պատերազմին մէջ խիստ շատ զօրք կորսնցուց, որոնց թիւը կրնայ չափազանց երեւիլ, Կրպի թէ մինակ ջերմէն ու քօլեռայէն 71 հազար հոգի պատերազմի անկարող եղան:

«Նոր ժողոված զօրքերուն մէջ ալ մարդու կորուստը զարհուրելի է. որովհետեւ երկար ծանապարհորդութիւն ընելու պարտաւորված ըլլալով, ծանրաներուն գէշութիւնէն, անձրեւէն, ցուրտէն, անօթութենէն կը մեռնին՝ երթալու տեղերին չհասած: Ըստնոյ մեռնողներուն թիւը 100 ին 45 ի հասաւ աս ձմեռ:

«Բեղարպուրի միջնաբերդին բոլոր տեղեր շինուած բոլոր գեղեցիկ ու հոյաւիպ տուները փլուզներու ետեւէ են՝ մինչեւ Սեփի Պետրոսի տունը՝ ընդարձակ զինուորական կրթութեան հրապարակ մը բանալու համար: Միջնաբերդին մէջ պահված գանձերը Սոփիա փոխադրվեցան:

«Բեղարպուրի մէջ Էթիոպիոս երթալու ծանրանք պատերազմական պաշար, թիւանօթ, գէնք եւ այլն կողմ սայլերով ծածկված է: Ֆինլանդիայի զաւառները պաշտպանելու սահմանված զօրաց թիւը 100 հազարի կը հասնի: Աստիւր երեքսպատիկ պիտի եւնայ թէ որ հարկը ստիպելու ըլլայ, եւ աս կողմէն զինուորութիւնը վերջին աստիճան աստիպել պիտի ըլլայ: Նիկողայոս կայսրը բերնոյն ըսած է, թէ ի հաստատն ձեռքէ հանելու յանձնառու կըլլայ, Ֆինլանդիայի մէջ մատ մը երկիր կորսնցնելու յանձնառու չըլլար:

«Բնդհանուր զինուորութիւնը որով աչք վախցնել կամ ժամանակաւ ճիշդ կից խանին անթիւ բաղմունքները Եւրոպայի վրայ քաշելու միտք բերելու ըստ պատմաբան մը ընել ուղիվեցաւ, դեռ պատրաստված չէ, եւ շուտով պատրաստվելիք ալ չունի: Ստանալու թիւերը կը քաշվի կոր աս բանը ընելէն: Թէ որ այնքան մարդոց բաղմունքին իրենց դեղերէն դուրս ելելու ըլլաննէ, ետքը ինչպէս կարելի է զանոնք տեղերին դարձրնել: Ուսումի մէջ որ մարդն որ զինուոր ըլլայ, ծառայութենէն ու ստիպութենէն կազմալու, ինքն ալ, կենն ալ զաւրկներն ալ: Թէ որ աս մարդիկը ստիպութենէն ազատած սեպին ինքզինքնին, բանը ուր կը

հասնի: Ասկէջ զատ, ասոնք պատերազմի տանելու համար՝ պէտք է կերակրել ու հաղվեցնել: Ըստնոյ տեղերը կարող կըլլան բոլոր աս ծախքերը վրանին առնելու: »

ՌԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Հարաւ օրը Սարտենիայի դեպի Գ. Թեքթո սեպուհը՝ Երեւելք գալիք սարտենիայի զօրաց արդէն մայրաքաղաքը հասած պաշտօնականներուն հետ Բ. Գուրը դնաց, եւ արտաքին գործոց առ ժամանակեայ պաշտօնեայ Սալիեթ Էֆենտին հետ տեսնելով, Սարտենիայի տէրութեան եւ Բ. Գրան մէջ եղած դաշնակցութեան վաւերացեալ թուղթերը փոխանակեց: Ետքը բարձրագոյն Սեփի կայսրին հետ տեսնելով, Սարտենիայի թագաւորին կողմէն գահարազարդ ծանրագին քթախոտի տաւի մը անոր նուիրեց, վրան Ս. Էթիոպիոս իմանալով թագաւորին պատկերը նկարված:

Ասկէջ զատ՝ Ս. Գազարու եւ Ս. Սարտիտի զինուորական կարգին մեծ ժողովները տուաւ անոր՝ վերամիտլ Եւ Սալի փաշային եւ Սոյապի կուսակալ Սահմուտ փաշային համար:

Նոյն կարգին հրամանատարութեան պատուանշանը տուաւ կայսրական դիւանին տեսնադպիր (պէլլեկի) Եթիֆ պէյին համար:

Դարձեալ նոյն կարգին ասպետութեան պատուանշանը տուաւ Բարձրագոյն Դրբան թագմանատան գլխաւոր անգամ Սեփի Եւրօսեան Սահակ աղային, Եւրօսեան Ստեփան աղային եւ քանի մը ուրիշ պաշտօնատարներու համար:

Յունաստանի Օթոն թագաւորը՝ մայրաքաղաքի դեսպան Գ. Բոնտուրիօթիին ձեռք փոխել կարգին մեծ խաշանշանը Եւրօսեան դեսպան ըրտ Ռեպրիֆին եւ նոյն կարգին մեծ սպայութեան ժապաւենը Վաղդի տէրութեան գործակատար Գ. Պէնտեթիթիին նուիրեց՝ Բ. Գրան եւ Յունաստանի կառավարութեան մէջ ծագած զբոստութեան վերնաշուն համար ըրած ջանքերնուն շնորհակալ ըլլալու մտք:

Սոյսերական կառավարութիւնը Եւրօսեան բարձրագոյն ատենին որոշմամբ հրաման ըրաւ, որ այսուհետեւ քարին ֆէֆ 50 փարայ ծախվի: Յայտնի է որ մինչեւ հիմայ 40 փարայ կը ծախվէր. բայց մայրաքաղաքի մէջ աս օրերս ամեն բան եւ մասնաւորապէս վաւօրը՝ որ քար կտորելու զլխաւոր միջոցն է՝ սղած ըլլալով, քարահանները աղբապար մատուցին Բ. Գրան, եւ կայսրական կառավարութիւնը զանոնք վնասե ազատելու համար քարին ֆէֆ 50 փարայ ծախելու հրաման ըրաւ:

Տրապիզոնի եկած լուրերը կը ծանուցանեն, թէ ամառայ 1 ին ուրբաթ օրը հոն հրդեհ պատահելով 60 ի չափ տուն ու խանութ պղծել է:

Եւրօսեան մէջ ապրիլ 5 թուով հետեւեալ լուրերը կը գրեն:

«Պէլլեպայի թագաւորին դահաժառանգ անդրանիկ որդին Պրապանթի դուքսը եւ իր լծակիցը մարտի 30 ին արքայապալայի հանդիսաւ Եւրօսեան մասն բաղմունքի ուղեկիցներով, Տեթութեանց հիւպատոսները, Զայոց ամեն նապախաւ Սրբազան Պատրիարքը եւ յունաց եպիսկոպոսները քաղաքէն մինչեւ

չեւ կէս ժամու ճամբայ արքայազուն հիւրերուն դիմաւ որութեան գաղտնի: Եւրօսեան կուսակալ Վեամիլ փաշան՝ քաղաքին դուրս վրան կանգնել տուած՝ Եւրօսեան քաղաքական եւ զինուորական պաշտօնատարներուն հետ կապուսէր: Եւրօսեան ծանրութեան երկու կողմը շարված կեցիւր էին: Եւրօսեան բարձրագոյն հիւրերը քաղաքին դուրս հասան, 21 թիւանօթ արձակվեցաւ, եւ Վեամիլ փաշան խիստ քաղաքավար կերպով զանոնք ողջունեց: Սրբազան Պատրիարքը բարեմաղթութիւններ ըրաւ անոնց, եւ թափուով Քրիստոսի սուրբ դերկանքը տարաւ: »

Պրօսպէն եկած նամակները կը շարունակեն քաղաքին ու բնակիչներուն ողորմելի տեսարանը նկարագրել:

Քաղաքը բոլորովին անմարդացած է, ըստ իրօրում նստելու տուն մը չէ մնացած: Բնակիչները քաղաքին շրջակաները ցրված, ոմանք խրճիթներու մէջ, ոմանք ալ վրաններու տակ, ոմանք ալ բաց դաշտին վրայ կը նստին: Ըստնոյ շատ անոնք ապրուստի եւ հացի մնացած, բաղմունքի մարդիկ անօթութենէ պիտի մեռնէին, թէ որ օտար տէրութեանց հիւպատոսները եւ քանի մը բարեխաղ Եւրօսեանի հարուստներ օգնութեան չհասնէին, եւ քանի մը օր շարունակ հաց, բրինձ կամ ցորեն չբաժնէին:

Բ. Գրան կողմէն Սիթիատ Էֆենտին ձեռք Պրօսպէի կարօտեալ բնակիչներուն խրկված՝ առաջին օգնութիւնները անցեալ շաբաթ հոն հասնելով բաժնրկել են: Սիթիատ Էֆենտին 300 վրան եւ 300 հազար դուռուշի դրամ տարել է հետը. կուսակալին պաշար գետնաշարժէն փած ու ետքը այրած ըլլալով, խրճիթի մը մէջ նստել, քաղաքին բոլոր թաղերուն Սեփիները կանչել, հրաման ըրել է որ օգնութեան կարօտ եղողներուն ցուցակը շինեն երեք կարգի բաժնրկած, եւ այսպէս առաջին կարգի խրճիթներուն 120, երկրորդ կարգիներուն 80 եւ երրորդներուն 40 անակ դուռուշ բաժնրկել է:

Հարաւ դեռ չէ դադարած. ատեն ատեն երկիրը կը սարսի ահապին որոտման ձայներով, եւ դեռ կանգուն մնացած խարխալեալ կամ վնասեալ շէնքերն ու պատերը հետզհետեւ կը փլչին. աս պատճառով փողոցներուն մէջ պտրտելու մարդ չհամարձակիր: Սիթիատ Էֆենտին յատկապէս գործաւորներ բռնել է օրը ու թիւ դուռուշ վարձով, որ անտրուգելի տուններն եւ ուրիշ շէնքերը փլուցնելու կ'աշխատին:

Քաղաքին մէջ մէկ քանի տեղեր ջուր կ'օրած է. աղբիւրի ջուրերը աւելանալուն մէջէն վաղել սկսել են. իսկ համաքաղաքի ջուրերը առջինէն աւելի սաւառ ու սաստիկ տաք են եղել. քանի մըն ալ նոր հանքային ջուրի աղբիւրներ երեւան ելել են:

Եւրօսեան շաբաթ մայրաքաղաքի մէկ քանի կողմերը քրդեայի դիպուածներ պատահեցան. աս շաբաթուալ քանի մը դիպուած լուրեցաւ, բայց օր օրի չաւելնալուն, կը յուսանք որ շուտով անհետ կըլլայ մայրաքաղաքէն: Ըստ համար պէտք է մեծ փոթի եւ խնամ ու նենալ մաքրութեան. պաղէն, տաքէն, պտուղներէ եւ ստամբար ծանրացնող կամ պաղեցնող ուտելիքներէ զգուշանալ, մանաւանդ չափազանց ըմպելիք չիմել, շատ չըմպել, չխմել եւ փոր-

հարութիւն պատահած ժամանակը շուտով կորելու ջանալ: Աս զգուշութիւններն են որ բոլոր աշխարհի բժիշկները կը պատուիրեն քրդեային դէմ, եւ մինչեւ հիմա փորձը իշաւունք տուած է անոնց:

Վանուրի նաւարկութիւնը կը կարծրի որ վերջապէս բացվի է: Եւրօսեան շաբաթ քանի մը նաւ Վաղաքէն ու Խալայիլէն ցորեն առած մայրաքաղաքի նաւահանգիստը հասան:

Եւրօսեան լրագրիւնները դարմանայի ծովային արկած մը կը պատմեն, որ աս օրերս հիւսիսային ծովուն մէջ պատահել է: Վ. Էթիֆ անուանով անգղիական նաւ մը մեծ պալէնա ձուկէ մը գարնրվելով ընկզմեր է: Պալէնան զետիվ ուժգին հարուած մը տալով նաւուն կողին, նաւը ջուր տունել սկսել է, անանկ որ մէջի նաւաստիները ստիպվել են մակուցները ծովէն իջեցնելու եւ փախչելու: Դամ մը ետքը նաւը ծովուն տակ իջել է: Վաղդիական ձկնորսի նաւ մը փախչող նաւաստիներուն հանդիպելով՝ զանոնք ներս առել՝ ու Վաղդիայ ծովափերու վրայ քաղաքը հանել է:

Եւրօսեան թագաւորը անցեալ ամեն ժամանակ եւ մինակ իր գործածութեանը համար երկու գործարան ունի թուղթ շինելու, եւ մինակ 95 հազար լիրա (3,500 քսակի մծա) տէրութեան մաքս կը վճարէ համար թուղթի վրայ: Իր շողեւարժ մասնաշինարար օրը 20 կենդինար (գանթար) ածուկ կերթայ: 116 դրաշար ունի միայն: Իսկ լրագրիւն ուրիշ ամեն գործերը կատարելու համար գործածված մարդոց թիւը 1,000-էն աւելի է, որոնց ամեն մէկուն վարձը գոնէ ամիսը 500 դուռուշ հաշուելով տարին 12 հազար քսակէն աւելի կրնէ:

Մայրաքաղաքի Բեֆ Եթիֆ լրագրիւն մէջ հետեւեալ հետաքրքրական դէպքը կը կարդանք:

«Սեփիաթիօն անգղիացեայ բանակը ասկէջ երկու կամ երեք ամիս առաջ զինուոր մը կար, որ օրէ օր կը գիրնար, երբ իր ընկերները կը վատէին ուտելիքի եւ ուրիշ հարկաւոր պիտոյքներու կարօտութենէն, եւ վերջապէս ստուեր կը դառնային: Ասկէջ զատ աս զինուորը կը համապարարուէր Եւրօսեան, զինուորական ծառայութեան մէջ փութաւորութեամբ ըլլալով Եւրօսեան նշանաւոր էր: Եւ մայի պատերազմին մէջ իր քաջութիւնը փորձով ցուցուց. բայց Եւրօսեանի պատերազմին մէջ աւելի պայծառ արիւնք թեան փորձեր տուաւ: Իր ընկերներէն մէկը՝ ուսաց զօրքերէն պաշարված՝ ըստ պանդուխտ կամ գերի բռնարվելու վտանգի մէջ տեսնելով, թշնամեաց խիստ խուժ բերուն վրայ յարձակեցաւ եւ իր ընկերին քով հասնելով յաջողութեամբ գահինիւ աղտոտեց: Աս քաջութեամբ համար զինուորական աստիճանի մէջ յաւանապալու արժանի գատվեցաւ, բայց ինքը համեստութեամբ հրաժարեցաւ աս պատիւէն: Օրին մէկը աս զինուորը աներեւոյթ եղաւ, եւ ամեն մարդ կարծելով թէ փախել է՝ մեծ դարմանքի մէջ մնացին: Սակայն տասնըփնգ օրէն բանակը դարձաւ, բայց ինչ վիճակի մէջ հիւանդ, դեղնած, փառած ու գիրութիւնը բոլորովին կորսնցուցած: Քննութեան կանգնելով, հասկցվեցաւ որ աս զինուորը իր անցարդ ըլլալէն ետքը մանջ գաւակ մը ծնել է թագաւորի մը խրճիթի մէջ: Սարդ չէր գիտեր ասոր դադանքը

